

շահած բարեկեցութիւնը, և աւելի զիւրին օտարութեան մէջ նարինջ ծախելը քան հայրենիքում՝ քրտինքով երկիր մշակելը, ըստ օտարութեան շահն ու բարեկեցութիւնը վաղանցուկ են, հայրենի հողն ու նրա մշակութիւնը յաւիտենական:

Շարունակելի

Վ. ր. Բիյ. Մարգարեանց

Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն

ՌՌՍԵՐԷՆԸ ՄԵՐ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ես հիմք ունիմ պնդելու, որ Թիֆլիսի լաւագոյն ուսումնարաններում—Ներս. դպրոցում, Յովնանեան և Գայեանեան ուսումնարաններում—ռուսերէն լեզուն շատ տկար արմատներ է ստանում, հէնց սկզբից: Այս բանից շատ հեշտ է եզրակացնել, թէ դրսի քաղաքներում և գիւղերում որքան պէտք է լինի ռուսերէնի արդիւնքը: Ինչով բացատրել այս տեղեղ երևոյթը: Ռուսերէն լեզուի ուսուցիչները ցնցող միշտ բարձր է մեր մէջ. նոքա կամ համալսարանական են, կամ ինստիտուտական և գիմնազիստական են, ուչիտելսկի ինստիտուտների և սեմինարների ընթացաւարտներ են, միով բանիւ լաւ հմտութիւն ունեցողներ: Մեր ուսումնարանների բիւզջէում ռուսերէնի համար միշտ առաջնակարգ ռոճիկ է նշանակւում: Ուսուցիչների և վարժուհիների բարեխղճութեան մասին տարակոյս ունենալու պատճառ չկայ: Թէ ժողովուրդը, թէ հոգեւոր վարչութիւնը, թէ հոգաբարձութիւնները միշտ ջանք և պատրաստութիւն են ցոյց տալիս այդ լեզուի ուսուցումը ամենայն կերպով բարձր պահելու: Հապա ի՞նչ է արդեւքը: —Անշուշտ մի ինչ որ նախապաշարում, մի ինչ որ մանկավարժական տկարութիւն, մի ինչ որ ծուռ հայեացք և ծուռ դատողութիւն:—

Շատ ժամանակ չէ, ինչ որ Թիֆլիսի Ս. Սարգսի աշակերտները Յովնանեան ուսումնարանի դահլիճում, հարցաքննութեան ենթարկուեցին ռուսերէնից: Այդ վոքը հանդէսը, որի մասին մամուլը կանխաւ յայտարարել էր, գաւառական ուսու-

ղիշներին շատ հետաքրքրել էր, բայց նորա հետևանքի մասին ոչինչ չիմացան, որովհետև մամուլը մոռացաւ նկարագրել կատարուած եղելութիւնը: Մանաւանդ անհասկանալի է, որ նոյն իսկ «Նոր դպրոցը» խոյս տուեց այդ բանից, բաւական համարելով լսի ձեռնական համարատուութիւնը, իսկ թէ ոչ հանդիսականները ինչ դադարիար պէտք է կազմէին այդպիսի համարատուութիւնից—մ'նաց հանելուկի պէս մի բան: Այն ինչ բանը շատ պարզ էր. այդ թեթեւ հարցաքննութիւնը անեղ դատաստան էր շատ շատերի համար: Ռուսերէն աւանդող ուսուցիչները և վարժուհիները պէտք է տեսած օրինակով համոզուէին որ ռուսերէնի ուսման հէնց առաջին տարուայ մէջ կարելի է մանուկն երին անհամեմատ աւելի առաջ տանել, քան ինչ որ իրանք Բերլինցներով, «ետեստովեննի» կամ «նեմոյ» մեթոդներով ճգնում են բան դոյացնել, բայց չեն յաջողեցնում: Երբ որ դրանց բոլորին առաջարկուեց, որ իրանք էլ իրանց աշակերտներին հարցաքննեն, նրանցից ոչ ոք յանձն չառաւ իւրով—ոսնն օգնել, որ ճշմարտութիւնը և իսկութիւնը լոյս հանուի:—

Բայց ի՞նչ էր Ս. Սարգսի ուսումնարանի դասատուութեան առանձնայատկութիւնը. այն, որ այն տեղ ռուսերէնը աւանդել էին Ս. Մանդինեանի Хрестоматія-յով:

Ես իհարկ է այդ Хрестоматія-ն չեմ գովի, կը ցանկայի, որ աւելի լաւագոյնը կազմուի*): Բայց ես պէտք է բարձրաբարձաբարողեմ այն մանկավարժական սկզբունքները, որոնք այդ անպաճոյճ գրքի հիմնաքարն են կազմում: Ինչքեմ շմուռնաւ, ես սկզբունքն եմ գովում: Ինչ որ յիշեալ հանդիսում փոքր շրջանի առաջ խօսել եմ իւր ժամանակին, այն այժմ յանձնում եմ լայն հասարակութեան դատաստանին:—

Արդ, որոնք են այն նախապաշարումները, որ այնպէս պղտորում են մեր ուսուցիչներին և վարժուհիներին մանկավարժական տեսութիւնը:

Այդ դասատուները նախ և առաջ շփոթում են երկու տեսակ ուսումնարանները իրար հետ—հայոց եկեղեցական ուսումնարանները մինիստերոսովոյի կանցելեարիական ուսումնարանների հետ: Նրանք մի տեսակ պոսիկ Բիսմարկներ ձեռնալով՝ զոհում են մայրենի լեզուն իբրև թէ պետական լեզուն զօրացնելու համար, և բիւրօկրատիայի հնարած

* Արպէս զի այս խօսքը վարկապարզի չհամարուի, ես ենթադրում եմ որ ուրիշները կարող են աւելի լաւագոյն նիւթեր ընտրել այդպիսի Хресто-ն Matія-ի համար. բայց այնպէս որ զրանք լինեն գեղարուեստական ընտիր հատուածներ:

«Եստեստովեննի» կամ «նեմոյ» մեթոդներն են առաջ քաշում: Այդպէս դալլաքութիւն անելով մեր խեղճ մանուկները գլխին՝ ձգտում են ռուսերէնը սորվեցնել առանց մայրենի լեզուի օգնութեան: Այս անգութ դալլաքութիւնը նրանք կոչում են Բէրլիցի մեթոդ^{*}): Բիսմարկեան մանկավարժութիւնը առ ոչինչ է համարում մանուկի նախնական եօթը տարուայ դարձացումը մայրենի լեզուով, և ստիպում է նրան մտածել և խօսել օտար լեզուով, որ նա տակաւին չի անհասկնում: Մանուկը համրանում է, իւր եօթ տարուայ դարձացումը կորցնում է, նորից սկսում է մի անծանօթ լեզու սովորել... Ըայց միթէ կարելի է լռեցնել ընտելիւնը, որ արդէն վաղուց շնորհել էր և պարգևել նրան մի լեզու—մայրենի լեզու: Փորձեցէք շրջել դէպի վեր գետի հոսանքը, անհնարին է: Այդպէս էլ անհնարին է լռեցնել մանուկի մէջ եօթը տարուայ մայրենի լեզուն: Ուրեմն միայն մանկավարժական բռնութիւն, միայն մշտաւոր յառաջդիմութեան խափանումն ու շփոթութիւն պէտք է առաջ գայ փոքրիկ գլուխների մէջ: Ըայց մեզ մի է ստիպում այսպէս անկարգ և անբնական կերպով վարուել:

Բարբերախտաբար հայոց եկեղեցական ուսումնարանն ունի իւր «մագնա խարան»—1905 թ. օգոստոսի 1-ի թանկագին ուկաղը, որով կատարեալ իրաւունք ունի պահել և պահպանել և փայփայել իւր մայրենի լեզուն: Ապա ուրեմն մեր ծակ գլուխ պէգագօգնեքը ինչ են մտածում որ թշնամանում են հայոց ուսումնարանի ոգուն. ի՞նչ իրաւունքով հայ մանուկի մաքից ջնջում են նրա եօթը տարուայ դանձր—մայրենի լեզուն, նորա դարձացման, մտաւոր մշակութեան խարխիւը. դրանք ի՞նչ խորհրդով կասեցնում են, դանդաղացնում են, խափանում են հայ մանուկի յառաջադիմութեան քայլերը: Ո՞ւմ որտին էդ են քսում նրանք, որ հնարում են ինչ որ Բերլիցեան մեթոդներ: Տղէտ վաճառականի տանը սալ դատական երբ ազախին են դառնում, որպէս զի տան զաւակներին պապա—մամա սովորեցնեն. ինչո՞վ են զանազանում այդ ազախիներին իրանց մի ոտի աջ ու մեր վարժօհիւնները, երբ որ սրանք չորս թաթ են կանգնում հաշում են, որպէս զի մանուկին հառկացնեն «СОБАКА ЛАЕТ» նախադատութիւնը առանց մայրենի լեզուի օգնութեան:

Հերիք է մասխարութիւնները, ուսումնարանը պէտք է կըրթի հաստատութիւն դառնայ, այսինքն առանց բռնադատելու լուրսու սովորեցնէ ռուսերէնը և չդաւաճանէ մայրենի լեզուն:

Որպէս զի այս երկու պատուէրները արդեամբ կատարուեն մենք պէտք է խուսափենք նաև միւս նախնապաշարումներից:

Մի երկրորդ և մեծագոյն նախապաշարումն այն է, իբրև թէ ուռւս մանուկն երի համար կազմած այբբենարաններն ու ընթերցանութեան առաջի գրքերը կարող են օգտուէտ դասակրք դառնալ նաև հայ մանուկների համար: Այդպիսի համողումին դալու համար, հայ մանկավարժը, փոքրիկ Բիսմարկը, այսպէս է տրամաբանում. ինչ որ լաւ է ռուս համար, այն ինչո՞ւ վատ պիտի լինի հայի համար: Սակայն իրականութիւնը այլ տրամաբանութեամբ է ձևանում: Ռուս մանուկի ախանջի համար *клюква*, *бузина*, *лещь*, *чижикъ*, *армякъ*, *борщъ*, *елка*, *землянка* և այլ այսպիսի բառերը ընտանի են, որովհետև իւր կենաց եօթը տարուայ ընթացքում նա միշտ այդ գաղափարներով է սնուել և հետն էլ համապատասխան բառեր է լըսել իւր մայրենի լեզուով: Նոյն բառերը կամ չեն թարգմանւում հայերէնի, կամ գաղափարով անդործածելի և խորթ են հայ մանուկի համար, հետևապէս դաստրանում այդ բառերը այնպէս կը դողանջեն, որ մանուկի որտի և մաբի մէջ չեն լարի և ոչ մի լար: Իսկ մեր պատուելի պեդագոգն ու պիդագոգիչկան, ամենեկին ուշադրութիւն չգարձնելով հայ մանուկի եօթը տարուայ ամբարած մտաւոր պաշարի և հոգեւոր աշխարհահայեցողութեան վրայ, առանց այլ և այլութեան նրա ձեռքն է տալիս Վօլպէր, Կօրխանիդի, Պօսադով-Գորբունով, Վախտերովներ և այլն, որոնք ամենքը խորթ են իրանց օտար բովանդակութեամբ հայ մանուկի մատաղատունի հասկացողութիւնների համար:

Բայց հայ մանկավարժը ընաւ չի վհատում: Նա մեծ յոյս է դնում գրքի պատկերների վրայ Ի՞նչ վոյթ, եթէ *телята*, *хомутъ дуга* և ուրիշ այսպիսի հասկանալի բառերի համար հայերէնում համազօրներ չունինք. հօ կարո՞ղ ենք մանուկին ցոյց տալ համապատասխան պատկերները: Եւ հէնց որ հայ մանկավարժը սկսում է առաջնորդուել այսպիսի սկզբունքներով, այն օրուանից նա անդիտակցաբար հայ լեզուի դահլճ է դառնում. այն օրուանից նա հայ մանուկի բերանում հաստատում է մի նորատեղծ ուռւախառն հայերէն, որ յիշեցնում է նրեանի սօսիցիայի եմշչիկները լեզուն, «ադա՛, էգ տ ել ե ժ կ էն քաշիւր գէսը էս

*) Վրդովիցուցիչ է այն հանգամանքը, որ այդ պարոնները չեն կարողանում պարզ բացատրել ինչ է իրանց բուն գաւառութիւնը: Նրանց մէջ մի մարդ չէր գտնի, որ գիտենայ, թէ ինչ է Բերլիցի մեթոդը, թէպէտ երբուում է նրա անունով. նրանց մէջ չէր գտնի մէկին, որ «համր» մեթոդը սօսանց գողտնի թարգմանութիւնների առաջ տանի. բայց Լի միշտ կը պնդէ, թէ օտար լեզուն պէտք է աւանդել առանց մայրենի լեզուի օգնութեան:

դու գէն ծանդը է . . . Էն խամուտը կտորած է . . . »: Այսպէս գնալով, հայ մանուկը ոչ ուսերէն բովանդակութիւնն է հասկանում ոչ հայերէնն է պահպանում առանց եղծանելու: Ռուսերէնը չլստաակել, հայերէնը կորցնել—միթէ աւելի թշուառութիւն կարող է լինել դպրոցական մանուկի համար: Եւ միշտ այսպէս էլ կը լինի, մինչև որ հայ մանուկը հայկական աշխարհայեցողութիւններէ համեմատ կազմած դասագիրք չունենայ:

Իսկ ի՞նչ է նշանակում «հայկական աշխարհայեցողութիւն». միթէ—մաժուռ, հարիսա, տրեխ, փափախ, մեր աշխարհը, և ոչ դրսի՞ աշխարհը: «Աշխարհայեցողութիւնը» մի վերացական գաղափար է. ինչով է նա շօշափելի դառնում, մարմնանում: Տարակոյս չկայ, որ աշխարհայեցողութեան իսկական արտայայտիչն է լեզուն: Ապա ուրեմն, ինչ որ ընտիր, հարազատ, ճոխ հայկաբանութեամբ արտայայտել կարելի է, հէնց այն է նաև «հայկական աշխարհայեցողութիւնը»: Իբրև փորձ վերառնենք զուտ ռուսական ստեղծագործութիւններից մէկը և տեսնենք, թէ ի՞նչ պայմաններում այն կարող է նաև հայկական աշխարհայեցողութիւն դառնալ: Ահա այդ օրինակը. „Заря-заряница, красная дѣвица, по лѣсу гуляла, ключи потеряла; мѣсяць видалъ не сказалъ, солнце увидѣло-подняло“.

Այս սիրուն ժողովրդական բանաստեղծութիւնը այնչափ դիւրամբուն է, որ կաճես թէ շատ հեշտ էլ պիտի թարգմանուի: Եւ մեր ինստիտուտիկա-վաժուհին իւր կտորած հայերէնով կսկսէ թարգմանել ամենայն խիղախութեամբ, ընաւ չըխըղճահարուելով: Էլ երկար ու բարակ չձգձգելով, նա կարճ այսպէս կը մտածէ, красная նշանակում է «կարմիր», մինչև անգամ—«Գեղեցիկ», по лѣсу—«անտառում»(?), ключъ—«բանալի» և այլն: Այսպէս թեթեւ է սահում վաժուհին իւր բառացի թարգմանութեամբ, որն որ իւր անհամութեամբ անհասկանալի և անհետաքրքրական պէտք է դառնայ հայ մանուկի համար: Երբ որ նիւթական թագմանութեամբ ռուսերէն հաւաճը կորցնում է իւր բանաստեղծական զարդերը, նա այլևս բանաստեղծութիւն չէ, և ուրեմն իւր խորթութեամբ այլևս չի արտայայտուի մանկան մայրենի լեզուով: Հիմի հասկանալի է, որ նոյն իսկ դիւրամբուն է և գեղեցիկ „Заря-заряница“—ն հայ մանուկի աշխարհայեցողութիւնից դուրս կը մնայ, եթէ այն թարգմանէ կտորած հայերէն խօսող ռուսերէնը կամ վաժուհին: Բայց թող մեր ընտիր բանաստեղծներից մէկը կամ միւսը հայացնեն նոյն „Заря-заряница“—ն, թող հարազատ հայերէնի փոխադրէ, թող այդ օտար ազնիւ նիւթի համար հայ-

կապան վայելուչ անօթ գանէ, իոկոյն այդ նիւթը հասկական մտածողութեան մաաչելի կը դառնայ, որով ռուսերէնի դասը արդարեւ հրահանգիչ կը լինի հայ մանուկի համար:

Այս խօսքերից ինքնին ծագում է մի խնդիր. մեր ռուսախօս ուսուցիչներն ու վարժուհիները, որ հայութիւնից շատ կամ քիչ աստիճանով հեռացած են, ո՞ր տեղից դասեն այդպիսի ընտիր թարգմանութիւններ, որպէս զի գէթ փոքր ինչ թաթախուեն հարադատ հայախօսութեան աւազանի մէջ: Թող այժմ ինքը ընթեցողը դատէ, թէ մեր ուսումնարանների համար ո՞րքան անհրաժեշտ են յատկապէս հայերի համար կազմած իմ Хрестоматія-ների պէս դասագրքերը, որ տեղ ռուսաց կը լատիքների դէմ հայ կլասիք թարգմանութիւններ են զետեղուած. թէ որքան դատապարտելի է ռուսաց լեզուի ուսուցման առաջին, երկրորդ, նոյն իսկ երրորդ տարին մեր մանուկներին չարչարել Վօլպէրներով, Կօրխանիտիներով, Բուբլիկովներով և նմաններով: Ժամանակ է վերջապէս հասկանալ, որ ռուս մանուկների համար կազմած ոչ մի իդէալական այբբենարան և ընթերցարան հայ մանուկի ռուսերէնի դասագիրք չի կարող լինիլ, այդ լեզուի ուսուցման առաջին տարիներում:—

Դասատուների մէջ տիրող նախապաշարումներից մէկն էլ այն է, իբրեւ թէ, կարելի է մէկ ձեռքով երկու ձմերուկ բռնել: Ամենայն հատուածի մէջ երկու բան կայ ուսանելու—բռնիւմը և լեզուն: Ինչ է հայ մանուկի համար сѣверное сіяніе, монархія, тундра, նոյն իսկ море, необятная степь, трезвонъ, мазурка, балалайка և այլն. միթէ սրանք լոկ օտար բառեր են: Ո՛չ, դրանք նաև անյայտ, անծանօթ գաղափարներ են, որ պէտք է բուն լեզուի ուսուցումից զատ բացատրուեն: Օտար լեզուի ուսուցիչը անդադար այդպիսի բառերի բացատրութիւններ տալով, չի նկատում, որ բուն լեզուի դասի կէսը կորցնում է: Մեր ուսուցիչները դեռ չեն ըմբռնում այս երկու գործերի իրարից բաժանելու օգուտը: Կէսը քիչ է քան ամբողջը. եթէ ուսուցիչը ազատուի բառեր բացատրելու աւելորդ գործից, բուն լեզուի կէս դասը կամբողջանայ, և ուրեմն իւր ժամերի մայրագումարը կը կրկնապատկի: Աւելորդ գործը այնուամենայնիւ ջոկ հոգալու գործ է: Եւ ջոկ գործը հիմնաւոր կերպով պէտք է կատարուի Բացատրել բառերը նշանակում է հասկացնել. իսկ արագ և անշփոթ հասկացնել կարելի է հասկանալի լեզուով, այսինքն մայրենի լեզուով, ապա թէ ոչ օտար լեզուն կիսատ և թերի կատարելով գործը՝ միայն շփոթութիւններ կը ստեղծէ: Հետզհետէ հարկաւ կարելք չի լինի միշտ մայրենի լեզուի

օգնութեան դիմելու: Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, այժմ կարելի է հասկանալ, թէ ինչու իմ Хрестоматіа-ն տպագրուած է երկու տեկստով, երկու բնագրով—հայերէն և ռուսերէն բնագիրներով, որոնցից մէկով աւելի պէտք է դիւրանայ բովանդակութեան ըմբռնումը, իսկ միւսով բացառապէս պէտք է աւանդուի անծանօթ լեզուն:

Երկու բնագիրները դասագիրքը*) շատերին տարօրինակ է թւում: Ոմանք ասում են, թէ «եւր որ մենք յունարէն և լատիններէն էինք սովորում, մեզ արդեւում էին «կլիւններ»—թարգմանութեան բանալիներ ունենալ, ուստի ստիպւած էինք բառարաններ զրա կուրացնել մեր աչքերը և այնպէս սովորել օտար լեզուն»: Առարկութիւնից ոչ ապաքէն լիւում է հին մզկած մանկավարժութեան բոյրը—«արդեւել», «ստիպել», կուրանալ» և ապա թէ «իմաստնանալ ... ինչ վնաս է կրում մանուկը, եթէ նա երբեմն աղատօրէն և զուարթ սրտով խորասուզւում է նաև կապակցած թարգմանութեան տողերի մէջ, միթէ այս երեւոյթը մի նշան չէ՞ նորա կենդանի հարցասիրութեան: Ուրեմն, այդ առարկութիւնը լոկ զրախօսութիւն է:

Դանք միւս առարկութեան: Ոմանք խոստովանելով, որ լաւ բան է բովանդակութիւնը լեզուի ուսուցումից ջուկել և այնու կրկնապատկել բուն լեզուի ժամերը, այնուամենայնիւ տարակուսում են, թէ ինչպէս պէտք է կարգադրուի հայերէն բնագրի ընթերցանութիւնը, քանի որ ռուսերէն լեզուի դասերին կարող է տիրապետող հանդիսանալ հայերէնը, սրով յոնքը շինելու տեղ, աչքը կը հանուի: Հէնց այս տարակոյտը լիովին փարատեց Ս. Սարգսի ուսումնարանի հարցաքննութիւնը. մինչև հանդիսի վերջանալը ամբողջ ժամանակ ոչ մի հայերէն բառ չլսուեցաւ դահլիճում, այլ վարժուհին միշտ ռուսերէն էր հարցնում և խնդիր տալիս իսկ աշակերտները միշտ ռուսերէն էին պատասխանում, շատ անգամ բաւական ընդարձակ հիւստած նախադասութիւններով և պարբերութիւններով: Զարմանալին հէնց այս կէտն էր, որ մինչդեռ Բերլինցները պաշտօնները իրանց «համը» մեթոդով աշխատում են մայրենի լեզու չգործածել ռուսերէնի ուսուցման ժամանակ, բայց իրանց աշակերտները դարձեալ դժուարանում են մի երկու ռուսերէն խօսք կարգին ասել,—այս տեղ ուր աշակերտները միշտ աշկարայ իրանց տրամադ-

*) Խնդրում ենք չշփոթել Թարգմանական (переводный) մեթոդը երկու բնագրի մեթոդի հետ: Առաջինով տալիս են մերկրանոն, երկրորդով ամբողջացած մտքեր:

բուժեան տակ են ունեցել երկու բնագիրներ, այսինքն ռուսերէնի հետնաւ հայերէն թարգմանութիւնը. նրանք մի տարի վարժութիւնից յետոյ բաւական ազատօրէն ձեւացնում էին ժողովրդի լրացած բանալստութիւններ, այն ևս զրեթէ հաւանորայէս ամենքը կանոնաւոր ելեէջներով, լաւ շեշտով, ուղիղ արտասանութեամբ: Մի խօսքով, կատարուել էր շատերի համար մի հրաշք—աշակերտները թէ՛ ռուսերէն էին սովորել և թէ առիթ չէին ունեցել հայերէնը ազաւաղելու: Եւ այսպէս—ամբողջ դասարանը, և ոչ թէ միմիայն յառաջագէտները:

Բայց դեռ ևս չիմացանք, թէ ինչպէս պէտք է կարգադրուի հայերէն բնագրի ընթերցանութիւնը դասերի ժամանակ, որպէս զի այդպիսի նախապատրաստութեամբ ռուսաց տեկոտի բովանդակութիւնը զիւրութեամբ հասկանալի դառնայ աշակերտների համար: Այդ բանը դիտելը պատուելու դժուարութիւն չունի, որովհետեւ յարմարութեան նայելով՝ կարելի է զանազան կերպով անօրինել: Կարգացնել կարող է կամ հայոց լեզուի ուսուցիչը, կամ ռուսաց լեզուի ուսուցիչը, կամ կը կարգան հէնց իրանք աշակերտները: Հայոց լեզուի ուսուցիչը (շաբաթը մի անգամ) կարող է իբրեւ ազատ ընթերցանութեան նիւթ ընտրել հարկաւոր հատուածը, (Хрестоматія—ի հայերէն բաժնից), ծանրանալով աւելի բովանդակութեան վրա, և ոչ թէ հայերէն լեզուի նըբութիւններ վրա): Ռուսերէն լեզուի ուսուցիչը կարող է իւր դասերի մօտաւորապէս 10-15 բաժնի յառկացնել միայն նախապատրաստութեան: Իսկ եթէ հնարաւոր է՝ կարելի է աշակերտներին պատուիրել, որ իրանք վաղօրօք կարգան այս կամ այն կտորը, թեթեւ կերպով ստուգելով նրա կարդացածն ու հասկացածը: Միով բանիւ Хрестоматія-ի մէջ հայերէն բնագիրը նրա համար չի գետեղուած, որ ռուսերէնի ուսուցչի վրա պարտք դրուի հայերէնն ուսուցանելը, այլ որ հարաւորապէս հայերէնով ռուսերէնի բովանդակութիւնը շուտ հասկանալի կացուցանուի:

Ի դէպ, լսում եմ, որ ոմանք ռուսալստ հայ ընտանեկներում հայերէն սորվեցնելու համար մեծ յաջողութեամբ գործ են ածում իմ Хрестоматія-ն և այնպէս հայերէն տեկոտի հասկացումը զիւրացնում են հարաւորապէս ռուսերէնով: Հասկանալի է, որովհետեւ այն տեղ թէ՛ ռուսերէն և թէ՛ հայերէն բնագիրները քաղած են հաւանորայէս ընտիր մատենագիրներէն:—

Հայ ուսուցչի նախապաշարումներից յիշատակելի է և այն, որ նա՝ ուսուցիչը, մանկան կըթուութեան մէջ շատ էլ մեծ ար-

ժէք չի տալիս դեղարուեստական գրականութեան: Եթէ նրանից հարցնէք, թէ ի՞նչպիսի նիւթեր պէտք է մատակարարել մանուկին օտար լեզուից, նա առանց տատանելու կը պատասխանէ, տուէք խօսակցական լեզու, մանկական զուարճալի սրտաշարժ (շին ուլի) մանրապատումներ: Քայց ուղիղ է այս դատողութիւնը:

Շարունակելի

Ս. Մանդինեան



Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (Հ. Էսելբախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

Բ. քաղաքի բանւորական թաղի, ամենամեծ դպրոցների մէկից, ժամը երեքին աշակերտներին արգէն արձակել էին, որոնք ուրախ ու գուարթ աղաղակներով ցրուեցին փողոցի այս ու այն կողմը:

Այդ օրը նշանակուած էր մանկավարժական ժողով: Փոշու մէջ ծածկուած յարգալից արագիւն, ուրիշ դպրոցական առարկաների հետ՝ դրուած էր ուսուցչանոցի պահարանի վրայ և իր բարձրութիւնից առանձին հպարտութեամբ նայում էր վեց երկար նստարանների վրայ նստոտած պ. վերատեսչին և ուսուցիչներին:

Քննելու էր առաջարկուած մի բաւական լուրջ հանգամանք: Եօթ և ութ տարեկան երկու հարազատ եղբայր, երկուսն էլ ստորին դասարանի աշակերտներից, իրանց վարք ու բարքով, նիստ ու կացով մեծ շիտթութիւն և յուզմունք էին ձգել ընկերների մէջ. դրա համար էլ անհրաժեշտ էր, և վերջապէս պէտք էր, վճռողական միջոցներ ձեռք առնուէին, թէ ի՞նչպիսի յարաբերութիւն են ունենալու նրանց հետ:

Ամենից առաջ կարգացուեց նախկին ժողովի արձանագրութիւնը, որ և ստորագրեցին բոլորը: Յետոյ պ. վերատեսուչը հաղորդեց ուսուցիչներին շրջանային Պ. տեսչի մի քանի նոր կարգադրութիւնները և խնդրեց իր կողմից, որչափ հնարաւոր է, դպրոցում հսկել կարգապահութեան վրայ. իսկ որպէս վերջաբան յայտնեց արգէն նշակուած ծննդեան արձակուրդի